Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018 թ. սեպտեմբերի 5-ից 8-ը Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.** -- Գարիկ Սարգսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.** - ՀՀ Արարատի մարզպետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** - ԻԻՀ Գիլանի նահանգ, 2018թ. սեպտեմբերի 5-ից մինչև 8-ը:

4. **Հրավիրող կողմը.** - ԻԻՀ Գիլանի նահանգապետ Մուստաֆ Սալառիի հրավերով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). - Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև միջմարզային հարաբերությունների զարգացմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Գիլանի Նահանգի միջև եղբայրացման և սոցիալ-տնտեսական համագործակցության մասին ստորագրված Փոխըմբռնման հուշագրով նախատեսված միջոցառումների իրականացման, ինչպես նաև մարզի գործարարներին աջակցություն ցուցաբերելու, մարզում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն օժանդակելու նպատակով

6. Քննարկված թեմաները.- Արարատի մարզի պատվիրակության այցի շրջանակներում կքննարկվել են հարցեր կապված եղբայրացման և սոցիալ-տնտեսական համագործակցության զարգացմանն և խորացման ուղղությամբ տարվող աշխատանքների հետ՝ երկկողմ պաշտոնական պատվիրակությունների փոխադարձ այցելությունների, մշակութային երկկողմ միջոցառումների, զբոսաշրջության զարգացմանն ուղղված համատեղ միջոցառումների կազմակերպման, անասնապահության, մասնավորապես՝ ոչխարաբուծության հետ կապված հարցեր և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.- Իրանի Իսլամական Հանրապետության Գիլանի նահանգում հանդիպումներ ենք ունեցել Նահանգապետի աշխատակազմի հետ, այնուհետև առանձին- առանձին հանդիպում ենք ունեցել Գիլանի նահանգի արտաքին կապերի դեպարտամենտի, Զբոսաշրջության և մշակութային հարցերով զբաղվող, ինչպես նաև տնտեսական զարգացման և ներդրումների իրականացման գերատեսչությունների հետ: Այցի ընթացքում հանդիպում է կազմակերպվել Գիլանի առևտրի պալատում՝ Գիլանի նահանգի խոշոր գործարարների մասնակցությամբ: Արարատի մարզի պաշտոնական պատվիրակությանը ուղեկցել են Էնզելի նավահանգստի տարածքում գործող Իրանի Իսլամական Հանրապետության ամենախոշոր ազատ տնտեսական գոտի, կազմակերպվել են այցեր Գիլանի նահանգի մի քանի արտադրական ձեռնարկություններ՝ հատկապես խոշոր 3 ձկնաբուծարաններ, պոլիէթիլեն արտադրության Գիլանում ամենախոշոր գործարան: Այցի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում Ռեշտի/Գիլանի նահանգի վարչական կենտրոն/ հայ համայնքի հետ և Արարատի մարզի պատվիրակությունը այցելել է Ռեշտ քաղաքի հայկական եկեղեցի:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվա-ծությունները, ստորագրված փաստաթղթերը. - Գիլանի նահանգի ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների հետ հանդիպման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն քննարկելու Արարատի մարզից համակցված ձկան կերերի ներմուծման հնարավորության, ինչպես նաև պահանջարկի ծավալների հարցը: ՏՏ ոլորտի երկկողմ պատասխանատուների հանդիպման ընթացքում քննարկվել Գիլանի նահանգի հեռուստաընթերություններում ժամանակակից տեխնոլոգիաների և ծրագրավորման նորագույն մեթոդների կիրառման աշխատանքներ՝ Արարատի մարզի համապատասխան մասնագետների կողմից իրականացնելու հնարավորության հարցը: Հանդիպումների ընթացքում քննարկվել է նաև ԻԻՀ Գիլանի նահանգից պոլիէթիլային որոշ արտադրատեսակների, ինչպես նաև շինանյութի ներկրման հնարավորությունը: Շատ արդյունավետ քննարկումներ են իրականացվել Հայաստանի Հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն ոչխարի ներմուծման վերաբերյալ՝ մինչ այժմ այն իրականացվում էր մեկ՝ մենաշնորհային կազմակերպության կողմից, որը այլևս չի գործում,

քննարկվել են Արարատի մարզից ներկրման հնարավորությունները, ձեռք է բերվել պայմանավորվածություն առաջիկայում հստակեցնել արտահանման և պահանջարկի ծավալների հետ կապված հարցերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. – Առաջարկվել է Արարատի մարզում Գիլանի նահանգի կողմից իրականացնել ներդումներ ձկնարդյունաբերության մեջ՝ մասնավորապես հիմնել ձկնկիթի արտադրություն: Գիլանի նահանգապետարանը առաջարկել է իր անմիջական աջակցությունը Մեղրու ազատ տնտեսական գոտու ստեղծան աշխատանքներին՝ հետագայում Գիլանի մարզի տնտեսվարողների կողմից այդտեղ գործունեություն իրականացնելու ակընկալիքով: Հայկական կողմը առաջարկել է Գիլանի նահանգապետարանին աջակցել Էնզելիի տնտեսական գոտում հայկական կողմի տնտեսվարող սուբյեկտներին գործունեություն ծավալելու գործում՝ մասնավորապես <<Էրեբունի Ստրեյդ>> ընկերության ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունը ներկայացնելու համար հիմնել/ ապրանքանիշը՝ Դիլիջան գարեջուր/:

Ձեռք բերված պայմանավորվածությունները և առաջարկությունները առաջիկայում իրականացվելիք բանակցությունների արդյունքում ավելի առարկայական կդառնան և արդեն հստակ պայմանագրերի և այլ պաստաթղթերի տեսքով կիրականանան հաջորդ երկկողմ հանդիպումների ընթացքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը: --- 25-ը սեպտեմբերի 2018թ.

25.09.2018

X

VERIFIED OCSP 25.09.2018 16:44:46 GMT+4

Подписано: SARGSYAN GARIK 2811870695